<<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամ

<<Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման>> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Նարինե Սարգսյան

Մանկապարտեզ՝<<Սիսիանի համայնքի թիվ 1 ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի Շաղատ բնակավայրում գործող խումբ

2023թ.

<<ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ>>ԲԱՐԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

<<ՆԱԽԱԴՊՐՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ>> ԾՐԱԳԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՆ՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները Կրթական գործընթացում

Դաստիարակ-մեթոդիստ՝ Սարգսյան Նարինե

Մանկապարտեզ՝ <<Սիսիանի համայնքի թիվ1ՆՈՒՀ>>

ՀՈԱԿ-ի Շաղատ բնակավայրում

գործող խումբ

2023թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ_____3

Գլուխ1.Նախադպրոցական հատատաությունում տոների տեսական հիմքերը. Տոների էությունն ու նշանակությունը ուսումնական գործընթացում.Ազգային տոներ----------5

ԳԼՈՒԽ 2.Ազգային տոների կրթա-դաստիարակչական հենք Զատկի տոնի օրինակով----------11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ_____18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ_____19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը նկարևորությունը.

Նախադպրոցական տարիքը երեխայի մոտ գեղեցկության աշխարհիմասին պատկերացումներ ներմուծլու ամենա օպտիմալ ժամանակն է:Նախադպրոցականտարիքի երեխեյի դաստիարակության վերջնական արդյունքը կախված է նրա բարոյական բնավորությունից,գիտելիքների մակարդակից,մասնագիտական հմտություններից և փորձից:

Այդ իսկ պատճառով մեծ նշանակությոն է տրվում սաների համակողմանի զարգացմանը,վերջինիս արվեստի աշխարհին ծանոթացնելուն, որն անփոխարինելիազդեցություն ունի նրա հոգևևևևևևոր հարստացման և շրջակա միջավայրի նկատմամբ ստեղծագործ վերաբերմունքի վրա:

Մանկապարտեզում տոնը ուրախություն է,զվարճան,որը կիսում են մեծերն ու երեխաները:Նրանք պետք է մտնեն երեխայի կյանք որպես լուսավոր իրադարձություն երկար մնա հիշողության մեջ:

Զարմանալի չէ, որասում են, որ վաղ մանկության տպավորությունն ամենաուժեղն է,անմոռանալին:Մանկապարտեզում տոնական օրը ապրում է

հիշողության մեջ՝ ծիծաղի,զվարճանքի, խաղերի,երգերի վառ տարազների, նվերների և առաջին ելույթի տեսքով:

Բացի այդտոնը գեղարվեստական դաստիարակության կարևոր միջոց է,իսկ երբ խոսքը վերաբերվում է ազգային տոնին, ապա դրանց դերը դառնում է նաև ձևավորվող անհատի ինքնությունը կերտելը:Այստեղ երեխաների ճաշակն է ձևավորվում.

.գեղարվեստական երաժշտական և գրական նյութ

.սենյակի գունագեղ ձևավորումը

.զգեստները նպաստում են երեխաների մոտ գեղեցկության,գեղեցիկի զգացողության զարգացմանը,

.ազգային տոների բովանդակությունն ու ծիսակարգին ծանոթացում բարձրացնում է սանիինքնաճանաչողությունն ու բարձրացնում ազգային գիտակցությունը:

Գաղտնիք չէ, որ ամենատպավորիչ ումնայուն գիտելիքը ձեռք էբերում հույզերի վրա ազդեցության ճանապարհով, ինչի հնարավորությունը լավագունս ընձեռնում են ըոները:

Վերոգրյալներ կարծում ենք, լավագունս ներկայացնում են քննարկվող թեմայի կարևորությունն ուարդիականությունը:

Աշխատանքի նպատակն ու խնդիրնը.

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ազգային տոների, ծեսեի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:

Աշխատանքի խնդիրները են.

.Ուսումնասիրել նախադպրոցական հաստատությունում տոների տեսական հիմքերը. Տոների էությունն ու նշանակությունը ուսումնական գործընթացում,

.Ներկայացնել ազգային տոների կարևորությունը ուսումնադաստիարակչական գործընթացում

.Ներկայացնել տոներին նվիրված միջոցառումների կազմակերպման առանձնահատկությունները մզնկապարտեզի միջին խմբում.

ԳԼՈՒԽ1. Նախադպրոցական հաստատություններում տոների տեսական հիմքերը

տեսական հիմքերը.Տոների էությումմ ու նշանակությունը ուսումնական գործընթացում. Ազգային տոներ

Վաղ մանկության տպավորությունները հաճախ մնում են ողջ կյանքի ընթացքում: Նրանց պայծառությունն ու հարստությունը երկար տարիներ կարող են ջերմացնել և զարդարել մարդու հոգին:Տոները բերում են իրենց հատուկ զգացմունքներն ու ապրումները ուրախ տրամադրությունների, մանկության անմոռանալի հուզերի ընդանուր շխթայի մեջ:

Մանկավարժի հիմնական խնդիրն է, օգտագործելով երեխաների հետաքրքրությունը, նրանց խանդավառությունը, այս տեսակի գործունեության մեջ սինթեզել ինչպես գեղագիտական , այնպեսել բարոյական դաստիարակությունը, գեղեցիկը տեսնելու և հասկանալու կարողությունը, ինչպես նաև այն բոլոր հմտությունները, որոնք երեխաները յուրացրել են ամբողջ ուսումնառության ընթացքում:

Ցանկացած տոնի մեջ կան արվեստի տարբեր տեսակներ՝ գրականություն, երաժշտություն,նկարչություն, թատրոն, մնջախաղ:Տոնը բացահայտում է նախադպրոցական երեխայի համակողմանի զարգացման ամենահարուստ հնարավորությունները:

Այսպիսով, տոնը արվեստի գրեթ բոլոր տեսակիների սինթեզ է:

Տարաբնույթ գործողությունների մեջ դրսևորվում են երեխայի ամենատարբեր հակումները, ձևավորվում են որոշակի հմտություններ և կորողություններ:

Մանկավարժության մեջ ստեղծագործական գործունեությունը սահմանվում է որպես երեխայիանհատականության զարգացման օբեկտիվ գործոն: Մամկավարժի նպատակն է կազմակերպել անհատականության ձևավորմանգործընթացը այսինքն. Կազմակերպել երեխայի կյանքը՝ որպես մշտական վերելք դեպի մշակույթ, աշխարհի հետ փոխգործակցություն ժամանակակից նաճումների մակարդակով, որպեսզի այդպիսի փոխազդեցության ընթացքում տեղի ունենա անձի առավելագույն զարգացում և այդ զագացման արդյունքում նա մտնի հեշտ ձևավորի իրական սոցիալական կապեր ու հարաբերություններ:

Ցամկացած տոնիհիմքը երաժշտական գործունեությունն է:

Մանկապարտեզում այն բաղկացած է երգ ու պարից:

Երգելը կարևոր տարր է նախադպրոցական տարիքի երեխայի դաստիարակության և կրթության մեջ, քաքնի որ այն մեծ

օգնություն է ցուցաբերում լսողական ընկալմանը, ձայի և արտասանությամ զարգացմանը:

Պարիբեմադրության գործընթացում նսմեծ աշխատանք է տարվում լսողական ընկալումը զարգացնելու ուղղությամբ:Պարը նաև թույլ է տալիս երեխաներին որոշակի շարժումների միջոզով զգալ երաժշտության բնավորությունն ու ռիթմը:

Տոնի մեջ ոչ պակաս կարևորություն է խաղում խոսքային ակտիվությունը, որը հիմնականում, բանաստեղծություններ սովորելուն:Հրապարակային խոսքի պայմաններում երեխան զգում է պատասխանատվություն. Պետք է խոսի ,խոսի այնպես,որ իեն հասկանան:Երեխաները սիրում են ելույթ ունենալ ,ցույց տալ թե ինչ կարող են անել:

Տոնը լավ իրավիճակ է խոսքն ակտիվացնելու համար:

Մարդու շարժողական հմտությունների զարգացման համար մեծ նշանակություն ունեն նյարդամկանային ապարատի հասունացումը և նախորդ սարունդների պատմականորեն հաստատված փորձի յուրացումը:Երեխայիo կողմից շարժումների զարգացումն իրականացվում է դաստիարակի ազդեցությամբ:Երեխայի զարգացաման համար հատկապես կարևոր է ձեռքի շարժումների վարպետությունը:Տեսողական գործունեության առանձնահատկությունները կայանում են

նրանում,որ դրա իրականցմամ համարկարևոր է ոչ միայն ձեռքի զարգացումը,այլև ձեռքի և աչքի համատեղ զարգացումը:

Շարժման տեսողական վերահսկումը էական է պատկերի ստեղծման բոլոր փուլերում:Իսկ նախադպրոցական տարիքի երեխաների տեսողական գործունեության համար անհրաժեշտ է զարգացնել աչք-ձեռքի համակարգումը:

Երեխաները, պատրաստվելով տոնին ,նվեր են պատրաստում

Իրենց ծնողներին՝ բացիկներ մայրիկին մինչև մարտի 8-ը, մասնակցում են սրահի զարդարման գործընթացին ձյան փաթիլներ,Ամանորի տոնածառի զարդարանք, աշնանային տոնի տերևներ և այլն օգտագործելով օրիգամիներ ննկարչական գործունեության արդյունքներ:

Տոնական միջոցառման ներկայացման համար անհրաժեշտ տարազների հիմնական մասը պատրաստում են երեխաների ծնողները նմանկապարտեզի մանկավարժական անձնակազմը,իսկ երեխաները փոքրիկ լրացումներ են անում, զգեստների և անհրաժեշտ պարագաների վրա կերպարվեստի պարապմունքների ընթացքում՝ զարգացնելով ձեռքի և աչքի մկանային համակարգը:

Հաղորդակցությունը ներառում է տեղեկատվության փոխանակում համատեղ գործունեության մասնակիցների

միջև, որը կարելի է բնութագրել՝ որպես հաղորդակցության հաղորդակցման կողմ:Շփվելով՝ մարդիկ դիմում են լեզվին՝

Որպես հաղորդակցության կարևորագույն միջոցներից մեկը:Եվ դաստիարակը օգտագործելով պահը, բռնում է այս հաղորդակցության սկիզբը,երեխաներին տանում էդեպի բանավոր խոսքը՝ որպես միջանձնային հաղորդակցության միջոց:

Հաղորդակցություններկրորդ կողմը հաղորդակցվողների փոխազդեցությունն է. Խոսքի գործընթացում փոխանակումը ոչ միայն խոսքերն են,այլև գործողությունները գործերը:

Ի վերջո, հաղորդակցության երկրորդ կողմը ներառում է միմյանց ընկալումը:Շատ կարևոր է, օրինակ,հաղորդակցման մասնակիցներից մեկը մյուսին ընկալում է որպես վստահելի, խելացի, հասկացող, պատրաստված, թե նախապես ենթադրում է,որ ոչինչ չի հասկանա:Եվ մանկավարժի համար շատ կարևոր խմդիր է թիմում ստեղծել ջերմ,ընկերական մթնոլորտ,երեխաներին սովորեցնել հանդուրժողականություն, հաստատել նրանց հաղորդակցությունը <հավասար հիմունքներով>:

Այսպիսով,հաղորդակցության մեկ գործընթացում պայմանականորեն կարելի է առանձնացնել երեք կողմ՝

տեղեկատվության փոխանցում,փոխազդեցություն և փոխադարձ ընկալում:

Այսպիսով, տոնի պատրաստման և անցկացման գործընթացում օգտագործվում են տարբեր տեսակի միջոցառումներ՝ երաժշտական,խոսքի, տեսողական գործունեություն և հաղորդակցություն:Բոլոր զարգացած հմտություններն ու կարողությունները,ձևավորված անհատականության գծերը,անկասկած, օգտակար են և ծառայելու են երեխային չափահաս տարիքում:

Ինչ վերաբերվում է ազգային կրոնական ու ավանդական տոներին,ապա հայկական ավանդական տոնացույցը կոչված է կարգավորելու և անաղարտ պահելորը՝ յուրաքանչյուր սերնդի դարեդար խոխանցվող ավանդներն ու ազգային արժեքները,ներգրավել նրն համայնքի կյանք,փախանցվող ավանդույթների մեջ և ինքնատիպ ազգային սովորությունների իրազեկ դարձնելը:Այդ ավանդական տոների մեջ կարելի է գտել հայ ժողվրդական իմաստության ոսկե հատիկները,որոնք խորին հարգանք և ակնածանք են առաջացնում ազգի նկատմամբ:

Ժողովուրդ,որի պատմությունը գալյս է դարերի խորքից,իր ուսերին ավել բեռ չիբերում, այլ վերցնում է միայն ամենաարժեքավորն ու պիտանին՝ որի առանցքը նոր սերունդն

է, ազգի նու գերդաստանի շարունակությունը, կուտակված սոցիալ-մշակույթային փորձի փոխանցումը:

Հայոց տոները շատ հարուստ երգեր ու պարեր ունեն:Երգերի բովանդակությունը համարյա միշտ համապատասխանում է տվյալ տոնի իմաստին:Նոր տարվա երգում հնչում են ընտանիքի բարեկեցության ու անհատի երջանկության մաղթանքները,Տիարնընդառաջի,Բարեկանդանի տոներին՝ հասարակական բարեկեցության,սիրային,չարխափան-հմայական երգերն են շատ,Զատկի տոնից մինչև Վարդավառ՝ դաշտերի առատության, մարագների լիության, զույգերի երջանկության մաղթանքները,Վարդավառին կատակերգը, ծաղրը և այլն:Ընտանիքներին շատցորեն, գարի, հաց, յուղ, մեղր, շատ անասուններ,ոսկի արծաթ, մաղթող երգում թեման շարունակվում էիղձերին հասնելու ցանկությամբ,սոցիալական դիրքի բարձրության մաղթանքով:Անթիվ են քնարական երգերը՝ սքանչելի համեմատություններով,բնության և մարդկային հույզերի նրբագույն ելևէջների ներկայացմամբ,կարոտով ու սիրով թաթախուն,ուրախ ու տխուր, թախծոտ ու կենսունակ,սրամիտ սյուժետային:Ժամանակակից գլոբալիստական աշխարհում,կարծում ենք տոների դասավանդումն ու դրանց միասին ճիշտ նեևկայացված տեղեկատվությունը կօգնեն հայրենաճանաչության, ինքնաճանաչության բարձրացմանը,

կնպաստեն արդեն հասուն տարիքում այն կարևոր գիտակցման արթնացմանը,որ այսպիսի մանրուքներով են ժամանակակից նույնական մշակութում տարբերվում փոքր ազգերն ու նպաստում մշակույթային բազմազանությանը:

ԳԼՈՒԽ2.Ազգային տոների կրթա- դաստիարակչական հենքը Զատկի տոմի օրինակով

Ազգային տոնածիսական համակարգի յորաքանչյուր տոն լայն հնարավորություն է տալիս երեխաներին ծանոթացնել տոն

խորհրդին, նրա հետ կապված ավանդույթներին ու սովորություններին, երգ ու պարին, ծիսակարգին:Հյկական ժողովրդական տոները որպես ազգային մշակույթին ծանոթանալու միջոց, հրաշալի նյութ ն պարունակում:Զատկի,Ամանորյա,Սուրբ Ծննդյան, Վարդավառի, Տիառնընդառաջի տոները մանկապարտեզում նշուն ենք նախապես ծանոթացնելով սաներին տոնի խորհրդին, դրա հետ կապված ազգային ավանդույթներին ու խորհուրդներին:

Հայոց ավանդական տոների միջոցով կարելի է նոր սերնդին փոխանցել մշակութային ժառանգության բազմաշերտ արժեքները՝ նպաստելով հայեցի դաստիարակության ու իրական ազգային արժեհամակարգերի ձևավորմանը: Կարծում ենք դա լավագույնս կարելի է անել միայն գիտակցված մոտեցմամբ վեր հանելով յուրաքանչյուր ծեսի գաղափարական հենքը ու նոր սերնդին հաղորդակից դարձմելով նախնիների կողմից այդքան կարևորված հարաբերությունների համակարգին.

.Հարգանք սեփական ընտանիքի ու հայրենիքի նկատմամբ

.Ընտանիքի դիտարկումը՝ որպես կարևորագույն արժեքի,

. Սերունդներին երկխոսության կարևորում

. Փոխօգնություն ևփոխգործակցություն,դրանց բարոյական ու սացիալական կողմերի գիտակցում ու կարևորում:

Հաճախ տոնին նվիրված միջոցառմանը պատրաստվելու համար տևական ժամանակ է պահանջվում,որի ընթացքում երեխաների հետ միասին նախապատրաստում ենք յուրաքանչյուր մանրուք,որ անհրաժեշտ էտոնը հավուր պատշաճի կազմակեպելու համար: Ծանոթանում ենք յուրաքանչյուր դետալի խորհրդին , կիրառման եղանակներին ու նպատակներին, որոնք , յուրաքանչյուրը,   անխոս. Բարձրացնում են սաների հայրենաճանաչողականությունը:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Սանը անկաշկանդ քայլ առ քալ միջավայրում , ամենօրյա արդյունավետ գործունեությամբ , լիիրավ մասնակցությամբ կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացմում են ծեսը: Ծիսական միջավայրում կատարում են նախօրոք   ուսուցանված երգերը , պարերը՝ ծանոթանալով ինչպես ծեսի այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել:

ՈՒսումնասիրելով տոների կազմակերպման առանձնահատկությունները, պետք է առանձնացնենք աշխատանքային հետևյալ փուլերը.

1.փուլ- նախնական պլանավորում.

2.փուլ- աշխատանք սցենարի վրա.

3. երեխաների նախնական ծանոթացումը տոնի հետ.

4.փուլ՝ փորձեր.

5. փուլ՝ տոնի անցկացում.

6. փուլ- ամփոփում.

7. փուլ-տոնի հետևանքը:

1.ՈՒսումնական տարվա սկզբին անցկացվում է մանկավարժական կազմի ժողով, որում քննքրկվում է տարվա աշխատանքային ծրագիրը, տոների ընտրությունն ու դրանց իրականացման ժամկետը:

2.Երկրորդ փուլում տոնի անմիջական պատրաստությունը:

Մանկավարժները ուսումնասիրելով տվյալ տարիքային խմբի ծրագրերը, ընտրում են խոսքի նյութ իրենց խմբի երեխաների համար՝ հաշվի առնելով նրանց անհատական առանձնահատկությունները, կարողությունները և գիտելիքները:

Նախապատրաստման այս փուլում ստեղծվում է տոնական սցենար,որն իր մեջ ներառում է արդեն ընտրված խոսք ու երաժշտական նյութ:Ավելին, ուսումնական տարվա առաջին տոնը սովորաբար սա աշնան տոնն է հիմնված է շատ պարզ նյութի վրա:Հետագա տոներին զվարճանքն ու խաղերն աստիճանաբար փոխարինվում են մանկական ներկայացումներով, իսկ մանկավարժներին մնում է միայն առաջնորդի դերը:

Այսպիսով մեր մանկապարտեզում տոներն օգտագործվում են ուսումնասիրված նյութը ամբողջացնելու և ամփոփելու համար:

5.Երբ գալիս է այդ շատ սպասված օրը, երբ կերպարանափոխված ու զարդարված դահլիճը լի է հանդիսատեսավ, իսկ երեխաները շունչը պահած սպասում են ակցիայի մեկնարկին… տոնը սկսվում է… անցնում է … և ավարտվում է, բայց տոնական աշխատանքը չի ավարտվում.

6.Փուլն ամփոփվում է. Ինչպես արդեն նշել ենք , երեխեների ու նույնիսկ մեծահասակների հիշողությունը պահպանում է վառ, ուրախ, վառ տպավորություններ, որոնցով տոնը հարուստ էերկար ժամանակ: Իսկ մանկավարժի խնդիրն այս փուլում այս հիշողություններին այն հմտությունները,կարողություններն ու գիտելիքները <<կցելն>>է , որոնք երեխաները ստացել են տոնին և դրան նախապատրաստվելու ընթացքում: Դրա համար անցկացվում են զրույցներ, որոնցում երեխաները հիշում են թե , ինչն է իրենց դուր եկել, մանկավարժի օգնությամբ ընդգծվում է տոնի մեջ ամենակարևոր գաղափարները, բացատրվում անհասկանալի պահերը:

7.Փուլ- տոնի հետևանքը: Այս փուլում ամրագրվում են տոնի թեմային առնչվող ամենաբովանդակալից ու գունագեղ տպավորությունները, դրոշմվում են գծանկարներում և մոդելավորումներում:

Երաժշտության դասերին երեխաները կրկնում են իրենց սիրելի պարերը և առանձին հերոսների գործողությունները:Որոշ կատարումներ կրկնվում են մի քանի անգամ՝ փոխելով կատարողներին:

Այժմ <<Զատկի>> տոնի նկարագրությամբ ներկայացնենք մեր մանկապարտեզում ազգային տոների՝ կրթական պրոցեսում

ներգրավելու առանձնահատկություններն ու բովանդակային կողմը:

Դեռ նախապատրաստական փուլում երեխաներին ենք փոխանցում տոնի խորհուրդը՝ հնարավորինս կարճ ու մատչելի:Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը կոչվում է նաև Զատիկ:Այն նշանակում է զատում, բաժանում հեռացում մեղքերից ու վատ գործերից, անգամ վատ մտքերից և վերադարձ Աստծուն:Զատիկը Հայ Առաքելական Ս.Եկեղեցու 5 տաղավար տոներից մեկն է:Հիսուս Քրիստոսի խաչելությունից և մահից հետո՝ երեկոյան բարեպաշտ մարդիկ մրա մարմինը իջեցրին խաչից և դրեցին ժայռափոր գերեզմանի մեջ՝ փակելով մեծ քարով:Երեք օր հետո կիրակի առավոտյան , յուղաբեր կանայք՝Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր ամայրամը և Սողոմեն, գնացին գերեզման՝ անուշաբույր յուղերով օծելու Քրիստոսի մարմինը, սակայն զարմանքով տեսան, որ քարայրի մուտքի քարը հեռացված է, իսկ գերեզմանը՝ դատարկ է: Մինչ նրանք տարակուսում էին , երևացին երկու հրեշտակ և ասացին. <<Ինչու եք ողջին մեռելների մեջ փնտրում:Աստեղ չէ , այլ Հարություն առավ>>:

Տոնին պատրաստվում ենք մոտ մեկ ամիս առաջ՝ զատկական զատիկ զանելով:Երեխաներին ենք ներկայացնում տոնի շուրջ եղած պատկերացումները, ինչպես նշել այն մեր տատիկներն ու պապիկները:Տոնական ուտեստներից մինչև հագուստ ու

նվերները կազմել են զատկական օրերի կարևոր մասը:Հայոց մեջ Սուրբ զատիկը մշտապես նշվել է մեծ ճոխությամբ:Տոնի պատրաստությունները սկսվել են շատ ավելի վաղ, շաբաթ երեկոն:Տանտիկիները օրեր առաջ <<ածիկ>> են աճեցրել՝ տոնին ներկած ձվերը դրա մեջ դնելու նպատակով:Ածիկը ծլեցրած ցորենն է, որը համարվում է մեռնող կյանքի խորհրդանիշը:Այսինքն՝ ցորենը ցանում ես՝ մեռնում է, հետո ծլում է ու միջուկից դուրս է գալիս կանաչը՝ խորհրդանշելով կյանքի սկիզբը:

Երեխաներին տոնի բովանդակությունտ և որոշ մանրամասների ծանոթացնելուց հետո սկսում ենք պատրաստվել տոնակատարությանը՝ զարդարում ենք կենաց ծառը, զատկական ձվերի համար նախատեսված զամբյուղը, խմբասենյակը բերում ենք միջոցառման համար ներկայանալի տեսքի:

Բուն տոնակատարության օրը զարդարում ենք ձվերը, խաղում ձվախաղ:Խաղում են երկուսով:Որոշում են, թե ով է առաջինը խփելու, և որոշյոլը խփում է խաղընկերոջ բռի մեջ գտնվող ձվի երևացող սուր գագաթին:Եթե առաջին հարվածից ջարդում է խփող ձուն՝ խաղընկերն իրավունք ունի մրցելու նաև ձվի բութ գագաթով: Եթե ջարդում է նաև երկրորդ գագաթը, ապա ջարդված ձուն տրվում է խփողին:Եթե խփողը ձուն ջարդում է, ապա նա ջարդված

ձվի տիրոջից ստանում է մի ամբողջական, չխփված ձու:Եթե ջարդվում է խփողի ձուն, ապա նա պարտված կողմն է անմիջապես խաղընկերոջն է հանձնում իր ջարդված ձուն կամ, ըստ պայմանավորվածության, մեկ ամբողջական չջարդված ձու:

Հնում ձուն բուսանախշվել է հետևյալ եղանակով.Սոխի կեղեվով ներկված ձվին սոսնձել են տարբեր տեսակի կանաչիների տերևներ:Այնուհետև ձուն թթու թանի մեջ են պահել և հանելուց հետո զգուշությամբ սոսնձած տերևներից ազատել են:Սոսնձաձ մասերում կարմիր գույնի նախշազարդ տերևների դաջվածք է մնացել, իսկ ջուրջը թթու թանից սպիտակել է:Ստացվել է տերևազարդ ձու:Մինչ սոխի կեղևներով ձվի ներկելը, դրանց վրա դրվել են բույսերի տերևևիկներ և ցանցավոր կտորով պինդ կապել այնպես, որ հեղուկը ձվի կեղևի և տերևի արանքը չթափանցի:Խաշելուց հետո ձուն կարմրել է, իսկ տերևների տեղը կարմիր է մնացել:

Ներկված ձվերն անուշ անելուց հետո, խաղում ենք զատկական ծիսախաղեր ու երգում ծիսական երգեր, որոնցից մի քնիսը կներկայացնենք ստորև:

Երեխաները չարխափաներով, ոտքերի դոփյուններով, այլ չխկչխկացող առարկաներով շրխկացնում և աղմկում են:Ներկաներից մեկը հարցնում է.

-Ինչ եք անուն:

-Մուկն ենք բռնում:

-Որ ինչ անեք:

-Որ ուղարկենք:

-Ուր:

-Մկստան:

Նորից են աղմկում:

-Ինչ եք անում :

-Ցուրտ ենք բռնում:

-Ուր ուղարկեք:

-Իր երկիրը՝ հյուսիս:

-Նորից են աղմկում:

-Ինչ եք անում:

-Ծուլությունն ենք բռնում:

-Ուր ողարկեք

-Օվկիանսսի հատակը:

Նորից են աղմկում:

-Ինչ եք անում:

-Փնթիությունն ենք բռնում:

-Ուր ուղարկեք:

-Խոզերի մոտ:

Նորից են աղմկում:

-Ինչ եք անում:

-Անկարգությունն ենք բռնում:

-Ուր ուղարկեք:

-Կապիկների մոտ:

:

Մի քանի անգամ զատկական ու ուսուցողական խաղեր խաղալուց հետո, երգում ենք զատկական երգեր ու պարում ազգագարական պարեր, որ սովորել ենք տոնին պատրաստվելու ընթացքում:Տոնը ոչ միայն երեխաների դաստիարակության միջոց է,այլև ծնողների շրջանում մանկավարժական քարոզչության ձև:Ուստի ծնողները ևս ներառվում են դրա նախապատրաստական աշխատանքներում տարազների, ատրիբուտների պատրաստում և այլն, և իհարկե հրավիրում են տոնին:Իհարկե, նկարագրված դեպքը չեր ներառում բուն տոնին ծնողների ներկայություն, բայց վերջինիս դերը մեծ էր նախապատրաստական աշխատանքների փուլում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

.ժամանակակից աշխարհում, երբ մարդկությունը գնում է մշակութային, տնտեսականբ ու քաղաքական համահարթեցման ճանապարհով, փոքր պետությունների համար գոյությամ պայքարի կենոշտրոնում ազգային ինքնության և և բազմազանության գիտակցումն ու պահպանումն է:Հենց այս ֆոնին է, որ վերջին շրջանմում մեր երկրում թեկուզ խաղաղաության բացակայության պայմաններում, նեծ հանրային հնչեղություն են ձեռք բերում ազգային ու եկեղեցիական տոնակատարություններին նվիրված արարաողությունները, փառատոններն ու այլ միջոցառումները:

.Մանկապարտեզում, տարվա կտրվածքով նախատեսված տոների ու դրանց նվիրված միջոցառումների թիվն ու բովանդակությունը կախված է առաջին հերթին տարիքային խմբից, իսկ հայկական մշակույթը մեզ ժողովրդական ազգային տոնակատարությունների հրաշալի փաթեթով է, ներկայանում, որն ընդգրկում է ողջ տարին:

.Ելնելով մեր երկրում տիրող իրավիճակից մեր ազգի առաջն ծառացած ժամանակակից խնդիրներից, կարծում ենք հատկապես պետք է կարևորվեն ազգային տոները,հայրենաճանաչությունն ու սեփական ինքնության

գիտակցումը դեռ նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

.Տոներն ու դրանց նվիրված միջոցառումն գիտելիքը մատուցելու բավականին հետաքրքրական հնարավորություններ են տալիս, քանի որ գիտելիքի մատուցումն իրականացնում է հետաքրքրական պայմաններում տևական ժամանակահատված և հաճախ ինտերակտիվ տարրերի համադրմամբ:

.Դրանք լայն հնարավորություն են ընձեռնում առաջին հերթին ֆիզիկական զարգացման՝ ընկալման, խոսքի,լսողական, շարժումային և այլ օրգանների, և հետո նաև բովանդակային ու գաղափարական հսկայական նյութով են օժտված:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Խառատյան Հ. Հայ ժողովրդական տոները, Ե.2005

2.Ղուկ.24;5-6

3.Бударина О.Н.Знакомства детей с руским народным творчеством.<Книга>:О.Н.Бударина-М.Детство,2003.

4.Երգ Զատիկ-զատիկ, httpc://www.youtube.com/watch?v=wUCcFJEPax8,

հասանելի է:

5.Զատկական երգեր, խաղեր, https://www.youtube.com/watc

v=2f75O8Mbtp8, հասանելի է:

6.Роль праздника на Руси.Тематика и содержание праздников и досугов для детей дошкольного возраста.Методика организации и прожедения развлекательных мероприятий в детском образовательном учреждении.

Сценарий екологического праздника "Ден Земли",

https://knowlebge.allbest.ru/pedagogics/2c0a5635bc68a5d53a89421316c26 0.html, հասանելի է:

7.Сидоров М. Е. Значение народмых традиций и их сохранение в современных календарных обрядах и праздниках.Молодой ученый 23.2020.

https://solncesvet.ru/opublikovannyie-materialyi/folklornyie-

prazdniki-kak-odin-izvid/, հասանելի է:

.